

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԾՁԲ-23/16-1»**

ք. Երևան

«10» 11. 2022թ.

Վարչապետի աշխատակազմն, ի դեմս վարչապետի աշխատակազմի գործերի կառավարիչ Գ. Բոջյանի, որը գործում է Աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Գարանտերվիս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Կ. Գիվարգիզյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կարիքների համար ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է **5 450 000 (հինգ միլիոն չորս հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ**, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի զանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը զանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4.3 Ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների մատուցման դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ $V_4 = U_4 / N_4 \times D \times P$, որտեղ՝

V_4 -ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

U_4 -ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

1-ին չափաբաժնի համար – 23 600 000 (քսաներեք միլիոն վեց հարյուր հազար)

2-րդ չափաբաժնի համար – 8 100 000 (ութ միլիոն մեկ հարյուր հազար)

3-րդ չափաբաժնի համար – 15 500 000 (տասնհինգ միլիոն հինգ հարյուր հազար)

4-րդ չափաբաժնի համար – 15 000 000 (տասնհինգ միլիոն)

N_4 -ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

1-ին չափաբաժնի համար – 28 353 800 (քսանութ միլիոն երեք հարյուր հիսուներեք հազար ութ հարյուր)

2-րդ չափաբաժնի համար – 9 744 800 (ինը միլիոն յոթ հարյուր քառասունչորս հազար ութ հարյուր)

3-րդ չափաբաժնի համար – 18 626 300 (տասնութ միլիոն վեց հարյուր քսանվեց հազար երեք հարյուր)

4-րդ չափաբաժնի համար – 18 038 700 (տասնութ միլիոն երեսունութ հազար յոթ հարյուր)

D -ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

P -ն մատուցված ծառայության քանակն է:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

7.14 Սույն Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո պայմանագրով սահմանված Պատվիրատուի իրավունքները և պարտավորությունները փոխանցվում են Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնին՝ բացառությամբ ֆինանսական գործառնությունների՝ հիմք ընդունելով «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ և 18-րդ հոդվածների պահանջները:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

Վարչապետի աշխատակազմ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն, 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն



Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Գարանտերվիս» ՍՊԸ
ք.Երևան, Թբիլիսյան խճ.20
«Կոնվերսանկ»ՓԲԸ
ՀՀ193004674290
ՀՎՀՀ 00840437



ՏԵՆԵՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆԱՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ճարտարություն		չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր բանակը	մատուցման	
հրավերով նախատեսված սված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	զգալի միավորը	ընդհանուր բանակը	հասցեն	ժամկետը**
1	5011130/632	TOYOTA PRADO (բանակը՝ 1 հատ) տեսակի ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ՝ համաձայն Հավելված 1.1-ի	500000	1	Ծառայության մատուցումը՝ ք. Երևան, մատակարարի գործունեության հասցե, իսկ մատուցման արդյունքը հավաստող փաստաթղթերը՝ ք. Երևան, Կոմիտաս 49/2	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կնքված համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո մինչև 25.12.2023թ.
2	5011130/633	ՎԱՁ-20214-126-20, LADA NIVA LEGEND 21214-007-50 և CHEVROLET NIVA տեսակի (բանակը՝ 17 հատ, 4 հատ և 2 հատ) ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ՝ համաձայն Հավելված 1.1-ի	4000000	1	դրամ	
3	5011130/634	FORD TRASIT (բանակը՝ 1 հատ) տեսակի ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ՝ համաձայն Հավելված 1.1-ի	200000	1		
4	5011130/635	HUNDAI TUCSON 2.7 I (բանակը՝ 1 հատ), NISSAN QASHQAI (բանակը՝ 2 հատ) տեսակի ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ՝ համաձայն Հավելված 1.1-ի	750000	1		

* ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վարչապետի աշխատակազմ
 ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
 Կառավարական տուն, 1

ՀՀ ՖՆ գործառնական վերջույթում



ԿԱՏԱՐՈՂ

«Գարանտսերվիս» ՍՊԸ
 ք. Երևան, Թբիլիսյան խճ.20
 «Կոնվերթսբանկ» ՓԲԸ

ՀՀ 1930004674290



**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆԱՅՈՒՑԱԿ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՄԻԱՎՈՐ ԳՆԵՐ**

Ծ/Թ	SU-1, SU-2 Ծառայությունների և SU-2-ի ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քայտուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	Տրանսպորտային միջոցների մակնիշները ըստ չափաբաժինների					
		Չափաբաժին 1	Չափաբաժին 2	Չափաբաժին 3	Չափաբաժին 4	Չափաբաժին 5	Չափաբաժին 6
		TOYOTA PRADO	ՎԱՍ-2-20214-126-20, CHEVROLET NIVA, LADA NIVA LEGEND 21214-007-50	FORD TRASIT		HUNDAI TUCSON 2.7 I, NISSAN QASHQAI	
1	2	3	4	5	6		
1	Բռնկման համակարգի ստուգում	5826	2494	4161		4158	
2	Սառեցման համակարգի ստուգում	5826	2494	4161		4158	
3	Յուղման համակարգի ստուգում	5826	2494	4161		4158	
4	Արտացման համակարգի ստուգում	5826	2494	4161		4158	
5	Կցորդման համակարգի ստուգում	5826	2494	4161		4158	
6	ՓՏ-ի աշխատանքի ստուգում	5826	2494	4161		4158	
7	ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում	5826	2494	4161		4158	
8	Կարդանային փոխանցման աշխատանքի ստուգում	5826	2494	4161		4158	
9	Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում	5826	2494	4161		4158	
10	Առջևի և հետևի կամրջակների աշխատանքի ստուգում	5826	2494	4161		4158	
11	Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում	5826	2494	4161		4158	
12	Արգելակային համակարգի աշխատանքի ստուգում	5826	2494	4161		4158	
13	ABS համակարգի ստուգում	5826	2494	4161		4158	
14	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	5826	2494	4161		4158	
15	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	5826	2494	4161		4158	
16	Թափի վիճակի ստուգում	5826	2494	4161		4158	
17	Տարբեր ազդեցությունների յուղերի որակի և մակարդակների ստուգում	5826	2494	4161		4158	
	SU-1 ներառվող ծառայությունների անվանումը						
	1. Շարժիչ						
18	Շարժիչի համուժ և տեղադրում	83234	24936	66573		58208	
19	Նույնը DOHC (2 բաշխիչ լիսեռ) ղեպքում	83234	54029	62412		62366	
20	Նույնը կոմդիցիոների ղեպքում	83234	54029	66573		66524	
21	Նույնը ԱՓՏ-ի ղեպքում	83234	70653	70733		70681	
22	Շարժիչի վերամոդրոգում	332936	166243	291255		249464	
23	Շարժիչի բարձրի համուժ և տեղադրում	24970	9975	13315		12473	
24	Բ/լիսեռի կափարիչի համուժ և տեղադրում	24970	8312	20804		19126	
25	Նույնը աջի համար (V6)	29132	12468	20804		20789	
26	Նույնը ձախի համար (V6)	29132	8312	20804		20789	
27	Շարժիչի բլոկի գլխիկի համուժ և տեղադրում	70749	37405	54090		54050	
28	Նույնը աջի համար (V6)	70749	54029	54090		54050	
29	Նույնը ձախի համար (V6)	49940	16624	33286		33262	

31	Շարժիչի գլխիկի վերանորոգում	83234	37405	66573	58208
32	Փականի խցուկի փոխարինում	6659	2494	4161	4158
33	Բաշխիչ լիսեռի համում և տեղադրում	41617	16624	37447	29104
34	Նույնը V6-ի ձախի ղեպքում	41617	29092	37447	29104
35	Նույնը V6-ի աջի ղեպքում	41617	29092	37447	29104
36	Նույնը DOHC ղեպքում	41617	16624	37447	29104
37	Բաշխիչ լիսեռի խցուկի փոխարինում	41617	20780	37447	29104
38	Հրիչի փոխարինում SOHC	12485	2494	6657	4989
39	Նույնը DOHC ղեպքում	8323	1662	5825	4158
40	Ատամնավոր փոկի փոխարինում	49940	37405	37447	37420
41	Ծնկած և լիսեռի առջևի խցուկի փոխարինում	33294	11637	20804	20789
42	Ծնկած և լիսեռի հետևի խցուկի փոխարինում	74911	33249	62412	54050
43	Մխոցային օդակմների փոխարինում	133174	70653	99859	99785
44	Թափանիսի համում և տեղադրում	37455	20780	29125	24946
	2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ				
45	Յուղի և յուղի գոտիչի փոխարինում	8323	1662	6657	5821
46	Յուղի պոմպի փոխարինում	16647	6650	8322	8315
47	Ղեկավարման բլոկի վերանորոգում	41617	16624	37447	29104
48	Բռնկման կարգավորում	6659	4156	4161	4158
49	CO կարգավորում	6659	2494	4161	4158
50	խարճարակի համում և տեղադրում	8323	4156	4993	4989
51	խարճարակի վերանորոգում	12485	4987	8322	8315
52	Օդի գոտիչի փոխարինում	4162	1662	1664	1663
53	Ինժեկտորի ֆորտունայի փոխարինում	8323	4156	5825	5821
54	Ինժեկտորի ֆորտունանների մաքրում	41617	12468	37447	33262
55	Բենզամղիչի փոխարինում	24970	4156	20804	12473
56	Վառելիքի գոտիչի փոխարինում	24970	4156	20804	12473
57	Վառելիքի բաքի համում և տեղադրում	24970	6650	20804	12473
58	Տրամյուրի համում և տեղադրում	12485	2494	5825	4158
59	Տրամյուրի վերանորոգում	12485	1662	5825	4158
	3. Սառեցման և արտածման համակարգ				
60	Հովիարի փոկի համում և տեղադրում	12485	1662	8322	6652
61	Հովիարի համում և տեղադրում	24970	9975	20804	16631
62	Ռադիատորի համում և տեղադրում	24970	12468	20804	16631
63	Նույնը կոմդիցիոների ղեպքում	24970	12468	20804	16631
64	Ռադիատորի վերանորոգում	54102	29092	41608	37420
65	Թերմոստատի փոխարինում	20808	8312	12482	12473
66	Զրի պոմպի փոխարինում	33294	9975	20804	19126
67	Ընդարձակող բաքի փոխարինում	14150	2494	4161	5821
68	Խլարարի համում և տեղադրում	16647	4156	12482	8315
69	Նույնը DOHC ղեպքում	19144	41561	12482	10810
70	Ռադիատորի փողրակի համում և տեղադրում	16647	4156	8322	8315
	4. Կցողում, ՓՏ և ԱՓՏ				
71	Բանվ. կամ գլխ. գլանի համում և տեղադրում	35791	12468	20804	19126
72	Բանվ. կամ գլխ. գլանի վերանորոգում	24970	8312	19140	14968

73	փոխարինում	45779	20780	33286	29104
74	Կցորդան օտմակի հանում և տեղադրում	6659	4156	4161	4158
75	Կցորդան ճոպանի հանում և տեղադրում	6659	4156	4161	4158
76	ՓՏ-ի հանում և տեղադրում	62425	24936	45769	45735
77	ՓՏ-ի վերանորոգում	166468	78965	133145	116416
78	ՓՏ-ի առանցքակալի փոխարինում	16647	4156	10818	8315
79	ՓՏ-ի պատյանի հանում և տեղադրում	41617	20780	29125	29104
80	Վազբաչակի շարժաբեքի փոխարինում	24970	8312	14979	12473
81	ԱՓՏ-ի կոնվերտերի հանում և տեղադրում	54102	29092	37447	29104
82	ԱՓՏ-ի տանող սկավառակի փոխարինում	49940	49873	49929	49893
83	ԱՓՏ-ի հանում և տեղադրում	66587	45717	66573	66524
84	ԱՓՏ-ի վերանորոգում	374553	290924	291255	291041
85	ԱՓՏ-ի յուղի փոխարինում	12485	12468	12482	12473
86	ԱՓՏ-ի յուղի գտիչի փոխարինում	12485	12468	12482	12473
	5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ				
87	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում	29132	16624	24965	24946
88	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում վերանորոգումով	62425	54029	58251	58208
89	Բաշխիչ տուփի խցուկի փոխարինում	20808	12468	16643	16631
90	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում	20808	9975	12482	12473
91	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում, վերանորոգ.	20808	8312	12482	12473
92	Կարդանային լիսեռի խաչուկի հանում և տեղադրում	20808	10806	16643	16631
93	Կարդանային լիսեռի միջ. կախցի հանում և տեղադրում	20808	12468	16643	16631
	6. Առջևի և հետևի կամրջակներ				
94	Առջևի կամ հետևի կամրջակի հանում և տեղադրում	83234	20780	66573	66524
95	Առջևի կամ հետևի կամրջ. լիկատար քանդում և հավաքում	166468	54029	124824	124732
96	Առջևի կամ հետևի կամրջ. մասնակի քանդում և հավաքում	66587	29092	49929	49893
97	Առջևի կամ հետևի կամրջ. կիսատառու հանում և տեղադր.	29132	9975	20804	20789
98	Կիսատառու առանցքակալի փոխարինում	24970	6650	16643	16631
	7. Կախց				
99	Առջևի կախցի լիակատար քանդում և հավաքում	66587	20780	49929	37420
100	Տրավերտի հանում և տեղադրում	33294	12468	33286	33262
101	Ջախ կամ աջ հորակալի հանում և տեղադրում	12485	9975	12482	12473
102	Անվակուդրի առանցքակալի փոխարինում	16647	9975	16643	16631
103	Նույնը հետին տանող ա/մ-երի համար	16647	6650	16643	16631
104	Հետևի անվակուդրի առանցքակալի փոխարինում	16647	9975	16643	16631
105	Նույնը հետին տանող ա/մ-երի համար	16647	9975	16643	16631
106	Ջախ կամ աջ հորակալի խցուկների փոխարինում	12485	4987	12482	12473
107	Ջախ կամ աջ հորակալի առանցքակալների փոխարինում	20808	4156	12482	12473
108	Ցնցամեղմիչի թասակի փոխարինում	8323	4156	5825	4989
109	Ցնցամեղմիչի հանում և տեղադրում	8323	4156	5825	5821
110	Ցնցամեղմիչի հանում և տեղադրում	8323	4156	5825	5821
111	Ցնցամեղմիչի փոխարինում	12485	6650	8322	8315

113	Ներքևի լճակի համուն և տեղադրում	20808	4156	12482	12473
114	Ներքևի լճակի վառարանի փոխարինում	12485	4156	8322	6652
115	Առջևի աջ կամ ձախ ձգանի համուն և տեղադրում	12485	5403	8322	6652
116	Միջին ձգանի համուն և տեղադրում	12485	4156	8322	6652
117	Ծածանակային լճակի համուն և տեղադրում	8323	1662	8322	8315
118	Վերևի լճակի համուն և տեղադրում	24970	4987	12482	12473
119	Վերևի լճակի վառարանի փոխարինում	24970	5818	12482	12473
120	Գնդե հորակապերի փոխարինում	24970	6650	16643	16631
121	Օպրակամների համուն և տեղադրում	24970	4156	12482	12473
122	Առջևի կայունարարի համուն և տեղադրում	24970	6650	12482	12473
123	Առջևի կայունարարի վառարանի փոխարինում	16647	3325	8322	8315
124	Առջևի կայունարարի առջևի վառարանի փոխարինում	6659	3325	3329	3326
125	Հետևի գալանակի փոխարինում	16647	4156	8322	8315
126	Հետևի ցնցամեղմիչի համուն և տեղադրում	16647	4156	8322	8315
127	Հետևի ձգանողի համուն և տեղադրում	24970	6650	12482	12473
128	Հետևի երկաթածողի համուն և տեղադրում	24970	6650	12482	12473
129	Կայունարարի կանգնակների համուն և տեղադրում	24970	6650	12482	12473
130	Հետևի անկյունագծային լճակի համուն և տեղադրում	8323	4987	4993	4989
131	Անկյունագծային լճակի վառարանի փոխարինում	8323	4987	4993	4989
132	Անկյունագծային կարագակորում	24970	6650	12482	12473
133	Զորան աշխատանքներ 1 քառ.սմ համար	8323	2494	4993	2495
8. Ղեկային մեխանիզմ					
134	Ղեկային կայունի համուն և տեղադրում	41617	12468	33286	24946
135	Սույնը V6-ի համար	41617	24936	24965	24946
136	Ղեկային կայունի վերանորոգում	133174	41561	116502	108101
137	ՂԿ-ի առանցքակալի և/կամ վառարանի փոխարինում	12485	4156	9986	9979
138	ՂԿ-ի հորակապերի համուն և տեղադրում	16647	6650	13315	13305
139	Հիդրոմեղադարի պոմպի համուն և տեղադրում	41617	12468	24965	24946
140	Սույնը DOHC թեպքում	41617	12468	24965	24946
141	Հիդրոմեղադարի փոկի համուն և տեղադրում	16647	4156	8322	8315
142	Սույնը DOHC թեպքում	16647	4156	8322	8315
143	Հիդրոմեղադարի փողակի համուն և տեղադրում	16647	4156	12482	12473
144	Սույնը DOHC թեպքում	16647	4156	12482	12473
145	Սույնը կոնդիցիոների թեպքում	16647	12468	12482	12473
146	ՀՈՒ ՂԿ-ի համուն և տեղադրում	24970	9975	20804	20789
147	ՀՈՒ ՂԿ-ի վերանորոգում	29132	10806	23300	23283
9. Արգելակային համակարգ					
148	Գլխ. գլանի համուն և տեղադրում	29132	12468	24965	20789
149	Գլխ. գլանի վերանորոգում	29132	12468	24965	20789
150	Վակուումային ուժեղարարի համուն և տեղադրում	24970	12468	16643	16631
151	Բանվ. գլանի համուն և տեղադրում	16647	12468	16643	16631
152	Բանվ. գլանի վերանորոգում	20808	12468	12482	12473
153	Արգելակային համակարգի օդահամուն	8323	4156	6657	4158
154	Առջևի սուպպորտի համուն և տեղադրում	16647	6650	12482	9979
155	Հետևի սուպպորտի համուն և տեղադրում	16647	6650	12482	9979

157	Հետևի սուպապորտի վերանորոգում	16647	6650	12482	9979
158	Արգելակային փողրակի փոխարինում	8323	1662	6657	4158
159	Առջևի արգելակային կոճղակների փոխարինում	8323	3325	6657	4158
160	Հետևի սկավառակային կոճղակների փոխարինում	8323	3325	6657	4158
161	Հետևի կոճղակների փոխարինում	8323	3325	6657	4158
162	Առջևի արգելակային սկավառակի փոխարինում	12485	4156	8322	6652
163	Հետևի արգելակային սկավառակի փոխարինում	12485	4156	8322	6652
164	Արգելակային սեղմակի համում և տեղադրում	12485	4156	8322	6652
165	ABS-ի համում և տեղադրում	41617	8312	29125	20789
166	ABS-ի վերանորոգում	41617	16624	29125	24946
167	Չեռքի արգելակի ծուլամի համում և տեղադրում	24970	8312	16643	14968
168	Չեռքի արգելակի մեխանիզմի վերանորոգում	24970	4156	12482	8315
	10. Էլեկտրասարքավորում				
169	Էլեկտրասարքավորման վերանորոգում	33294	4156	20804	16631
170	Չափիչ սարքերի համում և տեղադրում	16647	8312	12482	8315
171	Գեներատորի համում և տեղադրում	16647	6650	12482	9979
172	Նույնը V6-ի դեպքում	16647	9975	12482	9979
173	Նույնը հիդրոուժեղարարի դեպքում	16647	9975	12482	9979
174	Գեներատորի վերանորոգում	16647	6650	12482	8315
175	Սեկնարկիչի համում և տեղադրում	16647	6650	12482	9979
176	Սեկնարկիչի վերանորոգում	16647	6650	12482	9979
177	Առջևի լապտերի համում և տեղադրում	12485	2494	8322	4989
178	Հետևի լապտերի համում և տեղադրում	12485	2494	8322	4989
179	Բռնման կողպեքի համում և տեղադրում	12485	4156	8322	8315
180	Վազբաչակի համում և տեղադրում	24970	6650	16643	12473
181	Վազբաչակի ծուլամի համում և տեղադրում	12485	4156	8322	6652
182	Սաքերի պանելի համում և տեղադրում	45779	12468	37447	29104
183	Արագաչակի համում և տեղադրում	29132	8312	16643	12473
184	Ազդանշանի համում և տեղադրում	24970	4156	8322	16631
185	Ապակեկլացիչի շարժիչի համում և տեղադրում	24970	4156	8322	16631
186	Դռների կենտրոնական փակման համում և տեղադրում	24970	8312	20804	14968
187	Ազդանշանային համակարգի տեղադրում	24970	8312	12482	8315
188	Սագնիտոլայի տեղադրում	12485	4156	6657	4158
189	Վառոցքային լարերի համում և տեղադրում	20808	4156	14979	12473
190	Էլ/հարողապարների մասնակի վերանորոգում	37455	12468	29125	20789
191	Էլ/հարողապարների հիմն. խուլցի համում և տեղադրում	41617	12468	29125	24946
192	Էլ/հարողապարների երկրորդ. խուլցի համում և տեղադրում	29132	8312	20804	16631
193	Էլեկտրական տվիչների փոխարինում	6659	2494	4161	4158
194	Էլեկտրական անջատիչների փոխարինում	4162	1662	2496	1663
195	Վառոցքի մոմի փոխարինում	8323	2494	6657	4158
196	Կոմպիլիտների կիցքավորում	16647	9975	13315	13305
197	Կոմպիլիտների վերանորոգում	8323	4156	4161	4158
198	Կուտակային մարտկոցների փոխարինում	832	831	832	832
	11. Այլ ծառայություններ				

100	ներկում գին 1 բառ.դժ - ի համար	8323	4156	5825	4158
200	Ավտոմեքենայի լվացում	4162	1247	2496	2079
201	Ամիսի հանում և տեղադրում	2497	831	1248	832
202	Անվարդի վերանորոգում	6659	3325	4161	4158
203	Ամիսի բայանսավորում	3329	831	1664	1663
204	Ամիսի վալց	6659	4156	4577	4158
205	CO-գործան աշխատանքներ, գին 1 բառ.սժ - ի համար	6659	4156	4577	4158
206	հառատային աշխատանքներ 1 ժամ	12485	4156	12482	8315
207	Փակամագործի աշխատանքներ 1 ժամ	12485	4156	8322	8315
208	բարչարկի ծառայություն գին 1կմ, համար	2497	1247	2080	2079
	SU-2 ընթացքում օդագործվող պահեստամասերի քայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները				
	1.Շարժիչ				
1	Շարժիչի բլուկ	2080850	378202	1248235	831546
2	Շարժիչի գլխիկ	1664680	311705	832157	831546
3	Բարձիկ	70749	20780	62412	54050
4	Շարժիչի գլխիկի միջադիր	29132	10806	16643	20789
5	Շարժիչի վերանորոգման կոմպլեկտ	208085	457167	120663	120574
6	Շարժիչի բաշխիչ լիսեռ	291319	66497	249647	236990
7	Շարժիչի փական դուրս մղող	8323	2494	5825	5821
8	Շարժիչի փական ներս մղող	8323	2494	5825	5821
9	Շարժիչի փականի խցուկ	8323	831	2496	2495
10	Ծնկածն լիսեռ	249702	99746	224682	212876
11	Ծնկածն լիսեռի խցուկ առջևի	24970	4156	12482	12473
12	Ծնկածն լիսեռի խցուկ հետևի	24970	4156	16643	16631
13	Ծնկածն լիսեռի արմատական ներդիրներ	45779	8312	29125	29104
14	Ծնկածն լիսեռի շարժաթևային ներդիրներ	49940	16624	37447	33262
15	Հենակային տափողակ	6659	1662	4161	4158
16	Մխոց	83234	33249	70733	66524
17	Մխոցային օղակներ	83234	29092	70733	62366
18	Ատամնանիվ	24970	8312	20804	12473
19	Ատամնավոր փոկ	49940	33249	33286	33262
20	Շղթա	58264	20780	49929	43240
21	Հիդրոձգան	45779	12468	24965	20789
22	Հրիչ	8323	4156	4161	4158
23	Հիդրոլիչ	16647	8312	14979	14968
24	Բաշմակ	20808	6650	12482	12473
25	Հանգստարար	8323	4156	8322	8315
26	Թափանիվ	24970	12468	16643	16631
27	Թափանիվի պասակ	8323	2494	4161	4158
28	խցուկ բաշխիչ լիսեռի	2497	831	832	832
29	Շկիվ	24970	12468	20804	20789
30	Շարժաթև	24970	8312	12482	12473
31	Կարտերի միջադիր	8323	1662	6657	6652
32	Միջադիր	24970	12468	12482	12473

33	Յուղ շարժիչի հանքային, 1 լիտր (Բարձրորակ մեքենայի մակնիշին համապատասխան)	4162	2909	3745	2910
34	Յուղ շարժիչի կիսասինթետիկ, 1 լիտր (Բարձրորակ մեքենայի մակնիշին համապատասխան)	6659	3325	4161	3326
35	Յուղ շարժիչի սինթետիկ, 1 լիտր (Բարձրորակ մեքենայի մակնիշին համապատասխան)	8323	4156	6657	4158
36	Յուղի գտիչ	8323	2078	6657	4158
37	Յուղի պոմպ	49940	20780	37447	37420
38	Յուղի պոմպի շարժաբեղ	24970	41561	12482	9979
39	Յուղի ռադիատոր	49940	8312	37447	37420
40	Յուղի փողրակ	12485	3325	6657	6652
41	Յուղի ծորակ	16647	4156	9986	9979
43	Վառոցքի մոմ	12485	3325	7489	7484
44	Բենզոլբաք	91557	29092	74894	66524
45	Խառնարակ	4162	2494	2496	2495
46	Խառնարակի վերանորոգման հավաքածու	41617	24936	29125	24946
47	Ինժեկտորի ֆորտունկա	45779	8312	45769	45735
48	Վառելանյութի մղիչ էլեկտրական	149821	8312	79055	74008
49	Վառելանյութի մղիչ մեխանիկական	4162	2494	2496	2495
50	Վառելանյութի գտիչ	41617	24936	24965	24946
51	Վառելանյութի գտիչ նուրբ մաքրման	16647	4156	8322	8315
52	Վառելանյութի փողրակ	24970	6650	12482	12473
53	Աքսելերատորի ծուպան	24970	8312	12482	12473
54	Օդի գտիչ	24970	3325	12482	12473
55	Ջերմաստիճանային տվիչ	54102	12468	29125	29104
56	Յուղի տվիչ	54102	12468	33286	33262
57	Բաշխիչ լիտեռի տվիչ	54102	12468	29125	29104
58	Օդի ծախսի տվիչ	83234	37405	70733	62366
59	Արագաչափի տվիչ	34126	12468	23300	23283
60	Հովիտրի տվիչ	24970	12468	20804	20789
61	Ջրի տվիչ	20808	12468	16643	15799
62	Բենզոլբաքի տվիչ	24970	12468	18307	16631
63	Մարման ընթացքի կարգավորիչ	29548	12468	22052	22036
64	Մարման ընթացքի տվիչ	25220	12468	18557	18543
65	Ղեկավարման համակարգիչ	249702	45717	224682	212044
66	Պարապ ընթացքի տվիչ	58264	12468	20804	20789
67	Դրոսելային փականի տվիչ	41617	12468	19140	19126
68	Թթվածնի տվիչ	41617	12468	29125	26609
3. Սառեցման և արտածման համակարգ					
69	Հովիտրի փոկ	24970	6650	20804	12473
70	Հովիտր	37455	12468	32454	29104
71	Ռադիատոր	124851	54029	8322	70681
72	Ընդարձակող բաք	41617	12468	31622	29104
73	Ռադիատորի փողրակ	24970	6650	14979	12473
74	Թերմոստատ	20808	12468	20804	18294

76	Զրի պրոմպի առանցքակալ	29132	4156	20804	18294
77	Զրի պրոմպի բևակ	29132	12468	16643	12473
78	Սառեցման հերուկ 1 լիտր	4994	2494	3329	2495
79	Զրի պրոմպի սռամանիվ	4162	1662	2496	1663
80	Հողովակ	14982	1662	8322	6652
81	Փոկ	20808	4156	16643	12473
82	Փոկ կոնդիցիոների	14982	1247	8322	6652
83	Ծորակ	16647	4156	12482	9979
84	Խլարարի ներդիր	14982	2494	8322	6652
85	Խլարարի կախոց	4162	2494	4161	4158
86	Կրոնշտեյն	3329	1662	3329	3326
87	Անուր (խամուտ)	416	416	416	416
88	Խլարար	124851	49873	91537	83155
89	Ոնեզոնատոր	58264	20780	45769	41577
90	Վառարանի ռադիատոր	79072	33249	62412	54050
4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ					
91	Կցորդման բանդրական գլան	49940	20780	37447	34925
92	Կցորդման գլխավոր գլան	49940	18287	37447	29104
93	Կցորդման գլանի վերամորոզման հավաքածու	29132	9975	18307	14968
94	Կցորդման տանող սկավառակ	79072	16624	54090	45735
95	Կցորդման տարվող սկավառակ	49940	16624	39944	39914
96	Կցորդման առանցքակալ	41617	12468	34118	29104
97	Կցորդման փողոցակ	20808	4156	14979	12473
98	Փոխանցման տուփ	0	581849	416078	831546
99	ՓՏ-ի առջևի խցուկ	24970	6650	16643	12473
100	ՓՏ-ի հետևի խցուկ	24970	6650	16643	12473
101	ՓՏ-ի առանցքակալ	24970	9975	16643	12473
102	ՓՏ-ի առաջնային լիսեռ	83234	20780	58251	54050
103	ՓՏ-ի միջանկյալ լիսեռ	62425	26599	54090	49061
104	ՓՏ-ի եղամիկ	62425	14962	41608	37420
105	ՓՏ-ի ատամնամիկ	41617	15793	31622	26609
106	Համաժամիչ	45779	12468	29125	20789
107	Մուֆտ	1248510	34911	66573	66524
108	ՓՏ-ի վերամորոզման կոմպլեկտ	70749	14962	45769	29104
109	ԱՓՏ-ի գտիչ	70749	29092	45769	29104
110	ԱՓՏ-ի սկավառակների հավաքածու	95719	62341	79055	62366
111	ԱՓՏ-ի վերամորոզման կոմպլեկտ	83234	66497	74894	66524
112	Տրանսմիսիոն յուղ, 1 լիտր	14982	6650	8322	6652
113	ԱՓՏ յուղ, 1 լիտր	18311	9975	12482	9979
114	ՓՏ-ի առաջնային լիսեռ	2913	1662	2080	1663
115	Հերմետիկ 125գր	6659	4156	4161	4158
5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ					
116	Բաշխիչ տուփ	582638	153774	374471	415773
117	Բաշխիչ տուփի խցուկ	41617	12468	29125	24946
118	Բաշխիչ տուփի առանցքակալ	79072	14962	70733	62366

120	Բաշխիչ տուսի լիսեռ	124851	29092	99859	99785
121	Կարդանային լիսեռ	166468	20780	133145	128890
122	Էլաստիկ մուֆտ	41617	20780	37447	37420
123	Կարդանային լիսեռի միջամկյալ հենակ	41617	17455	33286	29104
124	Կարդանային լիսեռի խաչուկ	29132	13299	24965	20789
	6. Առջևի և հետևի կամրջակներ				
125	Հետևի կամ առջևի կամրջակ	1248510	207803	249647	831546
126	Ռեդուկտոր	249702	46382	208039	203729
127	Գլխավոր փոխանցման ատամնամուկների կոմպլեկտ	45779	8312	33286	29104
128	Պիֆֆերենցիալ	54102	8312	41608	37420
129	Պիֆֆերենցիալի սատելլիտ	62425	8312	45769	45735
130	Տանող ատամնամուկի խցուկ	37455	6650	37447	37420
131	Տանող ատամնամուկի առանցքակալ	45779	6650	29125	29104
132	Պիֆֆերենցիալի առանցքակալ	29132	12468	20804	20789
133	Կիսառմի	54102	18287	41608	37420
134	Կիսառմու առանցքակալ	29132	8312	20804	20789
135	Կիսառմու միջադիր	24970	7481	14979	12473
136	Կիսառմու խցուկ	24970	5818	12482	8315
137	Կարգավորիչ տպիողակ	8323	2078	6657	4158
	7. Կայտոց				
138	Տրավերս	49940	20780	41608	37420
139	Կրոնշտեյն	8323	1662	6657	4158
140	Ձախ կամ աջ հողակալ	79072	29092	83216	62366
141	Ձախ կամ աջ հողակալի փոշեթիկոց	29132	4987	16643	12473
142	Անվակունդ	70749	20780	54090	45735
143	Անվակունդի խցուկ	29132	4156	16643	12473
144	Անվակունդի ներքին առանցքակալ	49940	12468	37447	37420
145	Անվակունդի արտաքին առանցքակալ	54102	12468	29125	29104
146	Հետևի անվակունդի ներքին առանցքակալ	62425	12468	37447	37420
147	Հետևի անվակունդի արտաքին առանցքակալ	45779	12468	33286	29104
148	Ձախ կամ աջ հողակալի խցուկ	20808	4156	16643	12473
149	Հարվածամեղմիչի թասակ	33294	9143	27461	23283
150	Չսպանակ	29132	12468	20804	20789
151	Առջևի հարվածամեղմիչ	70749	20780	58251	54050
152	Հարվածամեղմիչի փոշեթիկոց	16647	4156	12482	9979
153	Հարվածամեղմիչի վրան	6659	2494	3329	3326
154	Ներքևի լծակ	133174	20780	120663	120574
155	Ներքևի լծակի վրան	20808	3325	14979	14968
156	Վերևի լծակ	120689	207803	104020	103943
157	Վերևի լծակի վրան	12485	4156	9986	9979
158	Գնդե հողակալ	37455	8312	20804	20789
159	Առջևի կայունարար	49940	12468	34951	34925
160	Առջևի կայունարարի վրան	14982	2494	7489	7484
161	Առջևի կայունարարի առջևի վրան	6243	2078	3745	2079
162	Հետևի գուպանակ	29132	8312	18307	18294

164	Հետևի մետաղածող (շտանգա)	33294	12468	29125	29104
165	Հետևի մետաղածողի (շտանգա) վրան	20808	3325	8322	8315
166	Հետևի անկյունագծային լծակ	58264	8312	37447	37420
167	Անկյունագծային լծակի վրան	16647	4156	9154	9147
168	Զսպակ (ռեստորա)	124851	41561	99859	83155
169	Զսպակի վրան	24970	6650	15395	12473
170	Զսպակի միջադիր	24970	6650	15395	12473
171	Զսպակի բռնիչ	24970	6650	15395	15384
172	Աջ կամ ձախ ձգան	24970	6234	15395	12972
173	Օայրակալ	24970	6650	15395	7900
174	Զգան մեջտերի	24970	4156	15395	49893
175	Անվահեծ	99881	16624	58251	
	8. Ղեկային մեխանիզմ				
176	Ղեկային կայուն	224732	71152	208039	203978
177	Ղեկային կայունի առանցքակալ	24970	4156	12482	12473
178	Ղեկային կայունի խաչուկ	41617	12468	20804	20789
179	Հիդրոուժեղարար	70749	8312	58251	45735
180	Հիդրոուժեղարարի փոկ	29132	4156	12482	12473
181	Հիդրոուժեղարարի վերամորոզման կոմպլեկտ	45779	8312	20804	20789
182	Հիդրոուժեղարարի պոմպ	45779	16624	33286	29104
183	Հիդրոուժեղարարի պոմպի վերամորոզման կոմպլեկտ	29132	8312	12482	12473
184	Ղեկային ձող	37455	4156	20804	20789
185	Ղեկային ձողի ծայրակալ	29132	4156	12482	12473
186	Հիդրոուժեղարարի յուղ, 1 կիտր	12485	4156	7489	7484
187	Ճոճամակ	66587	12468	33286	33262
188	Ճոճամակի վրան	29132	1662	12482	12473
	9 Արգելակային համակարգ				
189	Գլխ. գլան	62425	18287	33286	29104
190	Գլխ. գլանի վերամորոզման կոմպլեկտ	24970	6650	12482	12473
191	Վակուումային ուժեղարար	66587	20780	49929	34925
192	Բանվ. գլան	62425	12468	29125	20789
193	Բանվ. գլանի վերամորոզման կոմպլեկտ	45779	4156	20804	12473
194	Արգելակային փողորակ	20808	1662	16643	9979
195	Սուպպորտի ուղղորդիչ	20808	3325	16643	12473
196	Սուպպորտի մամեռ	20808	4156	16643	9979
197	Արգելի արգելակային կոճղակների կոմպլեկտ	62425	20780	37447	29104
198	Հետևի սկավառակային կոճղակների կոմպլեկտ	54102	16624	33286	26609
199	Հետևի թմբուկային կոճղակների կոմպլեկտ	45779	12468	29125	20789
200	Արգելի արգելակային սկավառակ	58264	16624	45769	34925
201	Հետևի արգելակային սկավառակ	58264	16624	45769	34925
202	Չեռքի արգելակի ձուպան	24970	4156	24965	12473
203	ABS-ի տվիչ	24970	4156	24965	12473
204	Արգելակային հեղուկ, DOT-3 - 800գրան	7907	2078	4577	2079
205	Արգելակային հեղուկ, DOT-4 - 800գրան	8323	3325	4161	3326
206	Չեռքի արգելակի ձուպան	29132	6650	20804	15799

207	Գեներատոր	374553	54029	291255	220360
208	Գեներատորի դիտորային կամիջակ	29132	4156	29125	24946
209	Գեներատորի ռեյն	37455	12468	33286	31599
210	Գեներատորի առանցքակալ	29132	4156	29125	26609
210	Ստարտեր	41617	4156	26629	26609
211	Ստարտերի ռեյն	237217	73978	195557	195413
212	Ստարտերի ածուխ	29132	12468	24133	24115
213	Բենդեքս	29132	8312	18307	14968
214	Ստարտերի կցորդիչ (ավտոմատ)	39952	8312	33286	32430
215	Առջևի լապտեր	29132	8312	20804	20789
216	Առջևի թարթիչ	70749	24936	54090	54050
217	Հետևի լապտեր	24970	4156	12482	12473
218	Հետևի թարթիչ	37455	8312	20804	20789
219	Արժեւակային լապտեր	6659	4156	4993	4158
220	Լամպ	29132	8312	16643	12473
221	Էլեկտրական անջատիչ	16647	4156	12482	9979
222	Էլեկտրական տվիչ	8323	831	6657	4158
223	Էլեկտրական չափիչ սարք	13317	831	6657	4989
224	Բռնկման կողպեք	14150	831	5825	5821
225	Էլեկտրալարերի գլխավոր խուրց	12485	4156	4161	4158
226	Էլեկտրալարերի երկրորդային խուրց	70749	37405	58251	54050
227	Վառոցքային լարերի խուրց	54102	12468	41608	37420
228	Վառոցքի մոմի ծայրակալ	29132	12468	24965	20789
229	Վազքաչափ	6659	1662	4161	3326
230	Վազքաչափի ծուպան	33294	1662	20804	16631
231	Արագաչափ	16647	4156	12482	8315
232	Ազրանշան	24970	4156	14979	12473
233	Ապակեկացիչ	12485	8312	9986	8315
234	Ապակեկացիչի շարժիչ	12485	2494	6657	4158
235	Դռների կենտրոնական փական	44946	4156	24965	19957
236	Ազրանշանային համակարգ	37455	4156	29125	29104
237	Սագնիտուլա	29132	16624	24965	20789
238	Էլեկտրաամբարձիչ	29132	20780	23300	20789
239	Էլեկտրաամբարձիչի շարժիչ	33294	8312	29125	24946
240	Էլեկտրաամբարձիչի շարժիչ	33294	831	24965	18294
241	Ներկ, ւուծիչ, օժանդակ նյութեր	24970	12468	14979	12473
242	Կուտակային մարտկոցներ	99881	29092	29125	29104
Ընդամենը			8 100 000	15 500 000	15 000 000

Տեխնիկական սպասարկման ընթացքում կատարվելու է՝

SU - 2 ծառայություն/ տեխ. սպասարկում և վերանորոգում՝ ըստ հավելվածի:

- 1 - պարտադիր պայման է օգտագործվող պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի չօգտագործված լինելը,
 - 2 - փերինիկական սպասարկման կայանը պետք է գտնվի Երևան քաղաքի փարաժքում: Տեխսպասարկման կայանը պետք է հագեցած լինի առնվազն 3 էլեկտրական ամբարձիչներով՝ առնվազն երեք ու կես փուննա բարձրացնելու կարողությամբ, անվաբացքի ուղղման սրենդով, ինժեկտորների լվացման սրենդով, թափքի ուղղման սրենդ, չորացման, դիփահոր: Ծառայությունները պետք է մատուցվեն փրանսպորտային միջոցը փեխապասարկման կայանում գրանցելու օրվանից՝ 5 օրացուցային օրվա ընթացքում, եթե փոխհամաձայնությամբ ավելի երկար ժամկետ սահմանված չէ:
- *Ծառայությունների միավոր գները հաշվարկված են Պայմանագրի 4.3 կետով սահմանված բանաձևի հիման վրա:
- ** Վճարումները կիրականացվեն փաստացի մատուցված ծառայությունների դիմաց:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վարչապետի աշխատակազմ
 ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
 Կարավարական տուն, 1



ԿԱՏԱՐՈՂ

«Գարանտերվիս» ՍՊԸ
 ք. Երևան, Թբիլիսյան խճ.20
 «Կոնվերթբանկ»ՓԲԸ



ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության		Դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
Իրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	մոխիդսպ	մոխիսզփի	տմոց	լվմոմ	ովմոց	ովդոսպ	ովսպ	ոստոսո	վզվրզտոզո	վզվրզտիսպ	վզվրզտիզն	Ընդամենը
1	50111130/632	TOYOTA PRADO (քանակը՝ 1 հատ) տեսակի ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ	:	:	:	:	:	:	:	:	:	:	:	:
2	50111130/633	ՎԱՐ-20214-126-20, LADA NIVA LEGEND 21214-007-50 և CHEVROLET NIVA տեսակի (քանակը՝ 17 հատ, 4 հատ և 2 հատ) ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ	:	:	:	:	:	:	:	:	:	:	:	:
3	50111130/634	FORD TRASIT(քանակը՝ 1 հատ), տեսակի ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ	:	:	:	:	:	:	:	:	:	:	:	:
4	50111130/635	HUNDAI TUCSON 2.7 I (քանակը՝ 1 հատ), NISSAN QASHQAI (քանակը՝ 2 հատ) տեսակի ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ	:	:	:	:	:	:	:	:	:	:	:	:

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ածողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախադրեալերու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

Վարչապետի աջխառնակազմ
 Բ. Երևան, Հանրապետության իրապարակ,
 Կատարական-Ռուս,
 ՀՀ ՖԵ Գործառնական վարչություն



ԿԱՏԱՌՈՂ



Պայմանագրի կողմ

գտնվելու վայրը _____

հհ _____

հվհհ _____

Պատվիրատու

գտնվելու վայրը _____

հհ _____

հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N _____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	Մատուցված ծառայությունների				Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամկացույցի/
			քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը			
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____-ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման
նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն